

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԼՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄԵՆԹԵՐԻ

ԽԵ. ՏԱՐԻ — 1931

Կը խմբագրուի եւ կը հրատարակուի

ՄԻԹՈՒՆԵՆ ՄԻՇԵՐՆՈՒԹԵՆ ԿՈՂՄԱՆԻ Ի ՎԻԵՆԱ

աշխատակցութեամբ ազգային եւ օտար խմբակցութեամբ:

Որպէս զի անկի մատչելի դառնայ Ուսումնասիրութեան օտարալեզու արեւելագէտներուն, խմբագրութիւնս շարունակաբար պիտի ներկայացնէ նաեւ կարեւոր քանակական յօդուածներուն համառոտ մէկ ամփոփումը, միջազգային որ եւ է լեզուաւ:

Բաժանորդագրեմն է արեւմտեան երկրի համար՝ 1 տարեկան, կամ տարեկան:

Մեր հասցէն՝

REDACTION DE LA REVUE "HANDES AMSORYA,"

VIENNE (Autriche), VII, Mechitharistengasse 4.

Հ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

1. Մեծապատիւ Պր. Զատիկ Խանգատեան հաճեցաւ նուիրել մեր Մատենադարանին իւր քարտիսագրական աշխատութիւններէն հետեւեալ թանկահին հրատարակութիւնները.

1. Rapport sur l'unité géographique de l'ARMENIE. Paris 1920.

2. Atlas de géographie économique de TURQUIE. Paris 1924.

3. Atlas de géographie économique du département de l'AUBE. Paris 1928.

4. Atlas de géographie historique de l'ALGERIE. Livre d'or du Centenaire 1830—1930. Paris 1930 (Couronné par l'Académie Française).

Կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնը տաղանդաւոր Աշխատասէրին այս թանկարժէք նուէրներուն համար:

2. Մեր խորին շնորհակալեքը նաեւ Պր. Աղեքսանդր Մ. Տէմիրճիպաշեանին ի Պլովդիւ, որ յառատաճիւր սրտէ նուիրեց մեր Մատենադարանին մէկ օրինակ «Պարզաբանութիւն հոգեւորապէս Սաղմոսացն Դաւթի մարգարէին», Վենետիկ 1687, մեծ 8⁰, էջը 840:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ
Մատենադարանապետ:

"HANDES AMSORYA,"

MONATSSCHRIFT FÜR ARMENISCHE PHILOLOGIE

XLV. JAHRGANG — 1931

Herausgegeben und redigiert von der

MECHITHARISTEN-KONGREGATION IN WIEN

unter Mitwirkung zahlreicher Armenisten.

Um unseren nichtarmenischen P. T. Abonnenten die Benützung unserer Zeitschrift zu erleichtern, werden wir fortlaufend von den wichtigen philologischen Abhandlungen ein kurzes Resumé in einer europäischen Sprache geben.

Preis dieses Jahrganges 1 Pfund Sterling.

Unsere Adresse:

3995

3.0



ԳԵՐ. 3. ԳՐԻԳՈՐ Վ. ԳՈՎՐԻԿԵԱՆ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՐԲԱՅԱՅՐ ՄԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵՔՆԱՅ

ՅՈՐԳԱՐԿԱՆՈՒԹԵԱՆ

Կանխած էինք ծանուցանել «Հանդէս Անսորեայի» նոյնմըներ—Դեկտեմբեր միացեալ թուերու մէջ յաւելուածաբար՝ Միսիթարեան Միաբանութեանս Գեր. Արքայ-հօր թանկագին կորուստը, որ տեղի ունեցած էր Յունուար 20ին:

Շարժաթ մը սպայ Միաբանութիւնս իւր ծերունագարդ եւ սիրելի Հօր դազաղին շուրջը. եւ կը մնայ համակրած թուխով, որովհետեւ չունի այլ եւս իւր սիրելի եւ մեծամուն Հայրը, որ իւր կենդանութեան հովանին էր Միաբանութեանս, կը ջամբէր միսիթարութիւն, կը ներշնչէր յոյս եւ քաջալերութիւն իւր որդւոց, գործելու եւ հանդիսանալու մշակներ առանց ամօթոյ Տեառն Այգույն եւ Ազգին պարտէզին մէջ:

Յունուար 27 ին յանձնուեցան Մեծ Հանգուցեալին պատուական նշխարք ցուրտ հողին: Արքայաբերու Դամբանարանը, որ Միսիթարեան Եկեղեցւոյն ներքեւ ունի իւր սրահները, ընդունեցաւ քազմարդին Գովրիկեանի մահկանացուն իւր գոզը, առընթեր մեծ Այտընեանի շիրմին, ի պահեստ միջեւ ի միւսանգամ՝ գալուստ Փրկչին:

Ինչպէս Միաբանութեանս, նոյնպէս բովանդակ Մայրաքաղաքիս եւ քարեկամ սրտերուն պատճառեց ցաւ եւ առիթ սուգի Գեր. Գովրիկեանի մահը: Յուղարկաւորութեան ներկայ խուռն քազմութիւնը, որ խուժած էր Մայրաքաղաքիս ամէն խաւերէն՝ վերջին յարգանքը մատուցանելու Գեր. Հանգուցեալին, եւ քազմութիւն ցաւակցութիւնները, որոնք հասան Միաբանութեանս աշխարհի մերձաւոր եւ հեռաւոր կողմերէն, արտայայտութիւնն էին այն մեծարանքին, որ կը վայելէր Հանգուցեալը մեծ աշխարհի մէջ:

Եւ ունէր մեծամուն Հանգուցեալը քարճրական առաքինութիւններ, մեծավաստակ արդիւնքներ, գորոնք որքան ալ թագուն կը ջանար պահել, քայց կը գտնէին անոնք հոշակ ոգիներ ճանչցող սրտերու մէջ. խոնարհ էր իր հոգին, անխառասէր,

